ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/36298-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-391-04.10.2022-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1296-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-391-04.10.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսվում է «Հանրակրթության մասին» օրենքում կատարել միայն փոփոխություններ, անհրաժեշտ է նախագծի վերնագիրը խմբագրել՝ հանելով «և լրացումներ» բառը:

2. Նախագծով առաջարկվում է 25-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում վարչական աշխատողը կարող է դասավանդել միայն այն դեպքում, երբ տվյալ առարկայի ուսուցիչները ապահովված են առնվազն մեկ դրույք ծանրաբեռնվածությամբ, իսկ թափուր մնացած ժամերի համար առնվազն երկու անգամ հայտարարվել է մրցույթ, և համապատասխան առարկայի ուսուցչի թափուր տեղը չի համալրվել սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխան: Առավելագույնը մեկ ուսումնական տարի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատողը կարող է դասավանդել այլ հանրակրթական ուսումնական հաստատությունում:»:

Ստացվում է, որ եթե աշխատողը մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատող է և մեկ այլ հանրակրթական ուսումնական հաստատությունում դասավանդելու է, ապա որպես երկրորդ ուսումնական

հաստատության դասավանդող իր հետ պետք է կնքվի որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինս մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատող է:

Այս մասով հարկ է նկատել, որ Աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 94-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Միաժամանակ նույն հոդվածի 3-րդ մասով էլ սահմանված է, թե որոշակի ժամկետով պայմանագրեր որ դեպքերում են նաև կնքվում, մասնավորապես՝

1) ընտրովի պաշտոններում աշխատողների հետ՝ ընտրված ժամանակահատվածով.

2) օրենքով սահմանված ժամկետով նշանակված աշխատողների հետ.

3) սեզոնային աշխատանքներ կատարողների հետ.

4) ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողների հետ.

5) ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ.

6) օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով, եթե Հայաստանի Հանրապետությունում աշխատելու համար օտարերկրացուց պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ.

7) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և վաթսունհինգ տարին լրացած անձանց հետ՝ գործատուի կողմից առաջարկվող պաշտոնում կամ աշխատանքում անձի մասնագիտական ունակությունների գնահատման հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի 25-րդ հոդվածի նոր շարադրվող 5-րդ մասի 2-րդ նախադասության դրույթը հիմնավորման և հստակեցման կարիք ունի, այլապես ներկայացված խմբագրությամբ այն հակասում է օրենսգրքին:

3. Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 4**. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6.2. հաստատում է պետական ուսումնական հաստատության համակարգողի նշանակման կարգը.»:

4. Հաշվի առնելով նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսվող կարգավորումների բովանդակությունը՝ առաջարկում ենք հիշյալ հոդվածներով սահմանվող դրույթները նախատեսել նոր շարադրվող խմբագրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1296 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-391-04.10.2022-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.11.2022

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «վկայագրման նպատակով» բառերը:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 17.3-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

■

«5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում վարչական աշխատողը կարող է դասավանդել միայն այն դեպքում, երբ տվյալ առարկայի ուսուցիչները ապահովված են առնվազն մեկ դրույք ծանրաբեռնվածությամբ, իսկ թափուր մնացած ժամերի համար առնվազն Երկու անգամ հայտարարվել է մրցույթ և համապատասխան առարկայի ուսուցչի թափուր տեղը չի համալրվել սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանաջներին համապատասխան: Առավելագույնը մեկ ուսումնական տարի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատողը կարող է դասավանդել այլ հանրակրթական ուսումնական հաստատությունում:»

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«13) սահմանում է ուսուցիչների ատեստավորման տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը.»:

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6.1փն կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին: Իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների նշանակված տնօրենի և հւսմակարգողի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին և նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով» բառերով

Հոդված 7. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների նշանակված տնօրենի և համակարգողի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին և նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով» բառերով;

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 3.1-ին կետում «պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է նպատակային ֆինանսավորում: Ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պահպանման ծախսերում պետական բյուջեի միջոցներից տրամադրվում են համապատասխան միջոցներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար, ինչպես նաև տրամադրվում է նպատակային ֆինանսավորում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով» բառերով:

2) 3.2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

Սույն նախագիծը է բխում «Հանրակրթության մասին» օրենքի որոշ դրույթներում կարգավորումներ և հստակեցում կատարելու անհրաժեշտությունից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը գնահատման հիմքով իրականացնում է սովորողների երեխայի վկայագրում, որը կարծես գործընթացի կրկնություն է և դիտվում է որպես լրացուցիչ գործողություն, ուստի լրացուցիչ վարչարարությունից հրաժարվելու անհրաժեշտություն առաջացավ:

Ուսումնական հաստատություններում առկա մի շարք խնդիրներից է ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու հարցը, սակայն ոլորտի բարեփոխումների համատեքստում այս խնդրին ցանկացած լուծում տալը ընդունելի չէ՝ որակի ապահովման տեսանկյունից: Հանրակրթության մասին օրենքի փոփոխություններով կարգավորում տրվեց վարչական աշխատողների դասավանդման խնդրին՝ հաշվի առնելով տնօրենի և տեղակալի վրա դրված բովանդակային պատասխանատվությունը, պաշտոնեական պարտականությունների ծավալը, փոքր համակազմ ունեցող դպրոցներում ուսուցիչների չլրացող դրույքաչափը:

Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորումը խմբագրվել է՝ թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Կարգավորվել է Օրենքի ՅՕ-րդ հոդվածի ՛Լին մասի 6.1-ը՝ ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին նշանակելու և պայմանագիր կնքելու իրավասությունների առումով:

2. Առաջարկվող կարգավորումը.

Ուսուցչի թափուր տեղի համալրման և վարձատրության բարելավման հիմնավորմամբ մինչև 100 աշակերտ ունեցող հաստատությունների վարչական աշխատողներին հնարավորություն է տրվում դասավանդելու նաև այլ հաստատությունում:

2022 թվականի ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության կառավարության N 539-Ն որոշմամբ հաստատված **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին»** կարգում նշված դրույթները լիովին բավարարում են ՏԱԱԿ-ի տնօրենի մրցույթի անցկացման պահանջներին և ՏԱԱԿ-ի տնօրենի ընտրության (նշանակման)

գործընթացն իրականացնելու համար, ուստի նոր կարգ մշակելու անհրաժեշտություն չկա, հետևաբար նաև՝ լիազորող Նորմի:

Օրենքի՝ կառավարության լիազորող նորմերի 13-րդ կետում անհարկի տեղ է գտեք «սահմանում է ուսուցիչների ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման, տարածքային և հանրապետական հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգերը.» ձևակերպումը, հաշվի առնելով, որ 12.2 և 14-րդ կետերով սահմանված լիազորող նորմերը բավարար են կարգի հաստատման համար, բացի այդ, «որակավորման» եզրույթը տարակարգի շնորհման նոր մեխանիզմով կիրառելի չէ:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակ» հասկացությունը առհասարակ չի գործելու, փոխարենը հաստատություններին տրվող նպատակային ֆինանսավորմամբ կիրականացվի կրթության կազմակերպումը:

Ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին նշանակելու և պայմանագիր կնքելու լիազորությունները բաշխված են ըստ լիազոր մարմնի իրավասությունների:

3. Նախագծի ընդունման նպատակը և ակնկալվող արդյունքը.

Օրենքի փոփոխություններով անհարկի ներառված լիազորող նորմերը խմբագրվել են, որով հնարավոր կլինի տարընթերցումներից խուսափել:

Փոքր ու սահմանամերձ համայնքների հաստատություններում վարչական աշխատողների դասավանդման գործընթացի հստակեցում է արվել, մեծ և փոքր դպրոցներում տարբերակում է արվել՝ հաշվի առնելով սովորողների կրթական շահը:

Օրենքից հանվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակ» հասկացությունը, որը հաստատությունների ֆինանսավորման տրամաբանությանը հակասում է և այլևս կիրառելի չէ:

Հաստատություններում հաշմանդամություն ունեցող սովորողների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների նպատակով տրամադրված ֆինանսավորմանը վերաբերող դրույթն ավելի առարկայական է ձևակերպվել, որն էլ ֆինանսավորման համար շփոթ չի առաջացնի:

Ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին նշանակելու և նրանց հետ պայմանագիր կնքելու իրավասությունները հստակ են: